

# ՀԱՅԵՐ

Մարտ 26, 1980... , Սք. Մէյրի հայկական եկեղեցին  
Լիվինկսթրնի մէջ հրդեհի տրուած է անծանօթ անձե-  
րու կողմէ:

Միայն թշնամին է որ կը փափակի հայ եկեղեցիի մը  
քանդումը: 65 տարի ետք տակաւին թշնամին կը շա-  
րունակէ հարուածել մեր ազգը: Եկեղեցիի մը քան-  
դումը տակաւին իր ոճրամիտ արարքներէն մին է մի-  
այն:

## ՀԱՅԵՐ

Արդեօք ներկայիս պատրաստ ենք պաշտպանել մեր  
հաստատութիւնները, պատրաստ ենք դիմադրել թըշ-  
նամիի հակահայ ոճիրներուն:

Ժամանակը հասած է որ ամէն հայ զիտակցի թէ թըշ-  
նամին չէ բաւականացած իր անցեալի ոճիրներով .  
վճռած է շարունակել հայ ազգին բնաջնջումը եւ  
յաջողած կըլլայ միայն այն ատեն՝ երբ հայը ձայն  
չի բարձրացներ, չի բողոքեր եւ անտարբեր կեց-  
ուացք կը ցուցաբերէ:

Այսօր Սք. Մէյրի եկեղեցին, վաղը՝ ուրիշ եկեղե-  
ցիներ, դպրոցներ եւ տակաւին շարքը երկայն է այն  
ոճիրներուն որ թշնամին կը ջանայ քայլ առ քայլ  
իրագործել:

ՍԹԱՓԵԼՈՒ ԺԱՄԸ ՀԱՄԱԾ Է...

Պէտք է կասեցուին թշնամիին դժոխամիտ արարքները:  
Մեր նահատակներու անունով կոչ կուղղենք թշնամիին  
դէմ պայքարելու. մասնակցելով ՀԱՅ ԴԱՏԻ բոլոր ձեռ-  
նարկներուն:

Հ.Յ.Դ.՝Վարդգէս՝՝ Կոմիտէ